ԿԱՆԹԵՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍ

ԿԱԶՄՈՂ՝ ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ԽՈՒՄԲ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն…….. 1

2.Գլուխ 1Վանի թագավորություն……2

3.Գլուխ 2 Արտաշեյան թագավորություն……4

4.Գլուխ 3 Արշակունյաց թագավորություն……6

5.Գլուխ 4 Հայաստանը Բագրատունիների օրոք.....7

6.Գլուխ 5 Կիլիկյան Հայաստանի թագավորությունը……..9

7.Գլուխ 6 ԽորհրդայինՀայաստան….....10

8.Գլուխ 7 ՀայաստանիՀանրապետություն..... 11

9.Գլուխ8 Դասի պլան.....12

10.Օգտագործված գրականության ցանկ…….17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմություն կամ հայ ժողովրդի պատմություն, հայ էթնոսի պատմություն, որը ժամանակագրական առումով բաժանվում է մի քանի դարաշրջանների: Այդ բաժանումն անվանում են պարբերացում: Ներկայումս Հայոց պատմության պարբերացումը կատարվում է հետևյալ սկզբունքով.

- *Հնագույն շրջան* - անհիշելի ժամանակներից մինչև Վանի թագավորության անկումը
- *Հին շրջան* - Երվանդունիների թագավորության կազմավորումից մինչև քրիստոնեության հռչակումը պետական կրոն
- *Միջնադար* - քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց մինչև հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը (վաղ, զարգացած և ուշ միջնադար)
- *Նոր շրջան* - սկսվում է հայ ազատագրական շարժումներով և հասնում մինչև Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը:
- *Նորագույն շրջան* - ընդգրկում է Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ Հանրապետությունների, ինչպես նաև Արցախի պատմությունը

Աշխատանքը ընդգրկում է նաև Վանի թագավորությունը Ք.ա. 9-6-րդ դ.դ.,

Արտաշեսյան թագավորությունը Ք.ա. 189-1թ.թ.

Արշակունիների թագավորությունը 66-428թ.թ.

Բագրատունիների թագավորությունը 885-1045թ.թ.

Կիլիկյան Հայաստանը 1080-1375թ.թ.

Խորհրդային Հայաստանը 1922-1991թ.թ.

Հայաստանի Հանրապետությունը 1991թ. սեպտեմբերի 21

Հայոց պատմությունը ժամանակագրական առումով բաժանվում է մի քանի

դարաշրջանների: Այդ բաժանումն անվանում են պարբերացում:

Ներկայումս Հայոց պատմության պարբերացումը կատարվում է հետևյալ սկզբունքով.

. Հնագույն շրջան

. Հին շրջան

. Միջնադար

. Նոր շրջան

. Նորագույն շրջան

Ներկայումս գիտական շրջաններում ընդունված է հայ ժողովրդի ինքնանվանումը կապել խեթական արձանագրություններում հիշատակվող Հայասա երկրի հետ:

Այս հասարակության կյանքում մեծ տեղ են զբաղեցրել հավատալիքներն ու ծեսերը, որոնք գերազանցապես կապված էին նախնիների, ինչպես նաև որոշ կենդանիների, օրինակ՝ ցլի, վիշապների, բնության երևույթների պաշտամունքի հետ:



Երևանը համարվում է աշխարհի ամենահին բնակեցված քաղաքներից մեկը, որը Հռոմից 29տարով մեծ է:

Հայաստանը մտնում է հնագույն երկրների այն վեցնյակում, որոնք կարողացել են անցնել հազարամյակների միջով:

Հայաստանը հինավուրց վանքերի ու եկեղեցիների երկիր է :

Աշխարհում առաջին եկեղեցին կառուցվել է Հայաստանում:

Աշխարհում առաջին թվաբանական խնդիրների դասագիրքը կազմել է VI դարի հայ գիտնական, մաթեմատիկոս Դավիթ Անհաղթը:

Հայկական լավաշը 2014թ .ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոգևոր ժառանգության ցանկում:Որոշումն ընդունվել է Փարիզում , մշակութային-հոգևոր ժառանգության պահպանության կոմիտեի նիստի ժամանակ: ՅՈՒՆԵՍԿՕ- ի ոչ նյութական ժառանգության ցուցակում են ներառվել նաև դուդուկի նվագը, (2005թ.), հայկական խաչքարերի ստեղծման վարպետությունը (2010թ.) և հայկական միջնադարյան էպոսը՝«Սասունցի Դավիթը» (2012թ.):

Հայաստանի տարածքում կան ևս 9 պատմամշակութային հուշարձաններ, որոնք նույնպես գտնվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանության ներքո՝ Հաղպատի վանք (X-XIIIդդ.),Սանահինի վանք (Xդ.), Մայր աթոռ Սբ Էջմիածին (IVդ.), Սուրբ Հռիփսիմե եկեղեցի (VIIդ.), Սուրբ Գայանե եկեղեցի (VIIդ.), Զվարթնոցի տաճար (VIIդ.), Գեղարդավանք (IV-XIIIդդ.), Ազատ գետի հովիտ, Շողակաթ եկեղեցի (XVIIդ.):



Վանի Թագավորություն

Պատմական Հայաստանի տարածքում առաջացած ամենաառաջին պետությունը, որն ընդգրկեց Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, Վանի թագավորությունն էր:

Մայրաքաղաքն էր Վանը(Տուշպա,Ցոսպ): Գոյություն է ունեցել Ք.ա ..9-6-րդ դարերում: Հիմնադիրն էր Արամեն (Ք..ա.

859-Ք.ա.843):

Վանի թագավորության տարածքում հիմնադրվել է առաջին համահայկական պետությունը, որը Երվանդ Սակավակյացի անունով կոչվում է Երվանդունիների թագավորություն: Ք.ա. 570-ական թվականներին Պարույր Սկայորդու որդին՝ Երվանդ Սակավակյացը հիմնում է առաջին համահայկական պետությունը՝ Երվանդունիների թագավորությունը:

Լեռնաշխարհի հայաբնակ հողերը միավորվում են մեկ պետության մեջ: Երվանդ Ա-ին հաջորդում է որդին՝ Տիգրան Երվանդյանը:



Ք.ա . 201 թվականին Սելևկյան արքա Անտիոքոս Գ Մեծը Հայաստան է ուղարկում մեծաքանակ զորքեր՝ հայ զորավար Արտաշեսի գլխավորությամբ: Հայկական բանակը պարտություն է կրում, իսկ հայոց թագավոր ԵրվանդԴ-ն (Ք.ա.220-մ.թ.ա.201), սպանվում է ճակատամարտում: Հայաստանը 10 տարով դառնում է Սելևկյան պետության մասը՝ սատրապություն՝ նոր մայրաքաղաք Արմավիր կենտրոնով: Խոշոր քաղաք էր նաև երրորդ մայրաքաղաքը՝ Երվանդաշատը, որը կրում էր վերջին թագավորի անունը: Ծոփքում Շամ (Սամոս) Երվանդունին կառուցել է Սամոսատ քաղաքը,իսկ նրա որդի Արշամը՝ Արշամաշատը: Սելևկյան տերությանն են միացվում նաև հայկական մյուս թագավորությունները՝ Փոքր Հայքը, Ծոփքը, Կոմմագենեն: Օտար տիրապետությունը Հայաստանում երկար չի տևում:

ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Արտաշեսը Մեծ Հայքում իրեն հռչակում է անկախ թագավոր:Այդպիսով , Հայաստանում400 տարի իշխած Երվանդունիների դինաստիային փոխարինելու է գալիս Արտաշեսյանների հարստությունը(Ք.ա.89-1թ.): Արտաշես Ա-ն Մեծ Հայքի թագավորությունը դարձնում է Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը: Առաջին քայլը հայկական հողերի միավորումն էր իրդրոշի ներքո: Մեծ Հայքի սահմանները մոտենում են հայկական էթնոսի տարածման շրջաններին՝ ներառելով գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը:





Հայաստանը Արտաշեսյանների օրոք իր հզորության գագաթնակետին հասավ Արտաշես Ա-ի թոռան՝ Տիգրան Մեծի օրոք (Ք.ա.95-մ.թ.ա.55): Նա իր թագավորության 2-րդ տարում՝ Ք. ա.94 թվականին, Մեծ Հայքին միացրեց Ծոփքը, որտեղ իշխում էր Զարեհի հետնորդ Արտաշեսը և ազատագրեց պարթևականների տիրապետության տակ գտնվող հայկական հողերը՝ «70 հովիտները» (Փայտակարան և Պարսկահայք):

Հայաստանն Արշակունիների
օրոք 66-428թթ.

Մեր թվարկության առաջին դարում հայոց պատմության մեջ նոր էջ է բացվում: Կործանված Արտաշեսյանների դինաստիային փոխարինելու է գալիս պարթևական ծագում ունեցող Արշակունիների հարստությունը: Նրանք երկիրը կառավարում են շուրջ 4 դար՝ մինչև 428 թվականը: Վաղարշ Արշակունին 52 թվականին Արտաշատում գահին է բազմեցնում եղբորը՝Տրդատին:

Արտաշատի վերակառուցումից բացի կառուցվում են նոր շինություններ: Մոտավորապես 77 թվականին Գառնիում կառուցվում է հեթանոսական տաճար, արքայական պալատ,բաղնիք և այդ ամենի շուրջ շարվում են բարձր և ամուր պարիսպներ:

Հայաստանը Բագրատունիների օրոք

885-1045թթ.

Աշոտ Բագրատունին հռչակվեց հայոցսպարապետ,իսկհայ իշխանների կողմից նաճանաչվեց որպես «Իշխանացիշխան»: Հարկահավաքությունն անցավ Աշոտ Բագրատունու ձեռքը,որի հետևանքով արաբ հարկահավաքներն այլևս Հայաստան մտնելու իրավունք չունեին: Աշոտը կրճատեց հարկերի քանակը և հոգ տարավ երկրիզարգացմանհամար:

Նա ստեղծեց ուժեղ բանակ,որի թվաքանակը կազմում էր 40 000, իսկ սպարապետ նշանակեց իր եղբայր Աբասին : Հայաստանն այնքան ուժեղացավ, որ 885թ.-ին ստիպված ճանաչեց Աշոտ Բագրատունու (885-890) թագավորությունը և նրան թագ ուղարկեց: Թագ ուղարկեց նաև Բյուզանդական կայսրությունը: 460 տարի առաջ կործանված հայկական պետությունը կրկին վերականգնվեց:

Բագրատունիների թագավորության ամբողջականությունը երկար չտևեց: Այն տրոհվեց ոչ մեծ թագավորությունների՝ Վասպուրականի, Կարսի,Տաշիր- Զորագետի , Սյունիքի, Արցախ-Խաչենի և Տարոնի: Դա նպաստավոր հանգամանք եղավ թշնամական Բյուզանդիայի համարև վերջինս կրկին

արշավանք ձեռնարկեց Հայաստանի վրա: Շուրջ 20 տարի տևած պայքարից հետո 1045 թ.-ին Բագրատունիների թագավորությունը կործանվեց: Բյուզանդիան բոլոր միջոցներով վերջ դրեց Հայաստանի դիմադրական ուժերին: Երկիրը կատարյալ ավերածության հասավ:

Կիլիկյան Հայաստանի թագավորությունը

1080-1375թթ.





Կիլիկիայի Հայկական Թագավորություն միջնադարյան հայկական անկախ պետություն՝ ստեղծված սելջուկ-թուրքերի արշավանքների հետևանքով Կիլիկիա գաղթած հայերի կողմից: ԳտնվելովՄեծՀայքից դուրս,այնզբաղեցնումէր պատմական Կիլիկիա շրջանը:

-

Կիլիկիա անվան ստույգ ծագումնաբանություն չկա,Իշխանության հիմքըդրվել է 1080թ-ին Բագրատունիների շառավիղ՝ Ռուբինյանների կողմից: Մայրաքաղաքը սկզբնապես Տարսոնն էր: Կիլիկյան Հայաստանը միակ քրիստոնյա պետությունն էր ողջ Մերձավոր Արևելքում:Իզուր չէ, որ նրան երբեմն անվանում էին «քրիստոնյա կղզի մուսուլմանական ծովում»:

Քանի որ Մեծ Հայքը գտնվում էր օտարների իշխանության տակ, ապա կաթողիկոսի նստավայրը տեղափոխվեց Կիլիկիա և հաստատվեց Հռոմկլա քաղաքում:1198թ-ին ԼևոնԲՄեծագործի թագադրմամբ Կիլիկյան Հայաստանը վերածվեց Կիլիկիայի ՀայկականԹագավորության: 1375թ. Կիլիկյան Հայաստանը կործանվեց եգիպտական մամլուքների հարձակումներից:

1918թ. մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն, որը գոյատևեց մինչև 1920թ.:

ԽորհրդայինՀայաստան(1922-1991)



1917 թվականին Ռուսաստանի հեղափոխությունից հետո, Անդրկովկասի դուրս գալը նախկին Ռուսական կայսրությունից և 1919-1920թթ . նրա տարածքում երեք ազգայինպետությունների հիմնումով: Սյունիքը Հայաստանի Հանրապետության կազմում էր: Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի և Թուրքիայի միջև Հայաստանը պարտավորվում էր Սյունիքը խառը բնակչությամբ հանձնել Ադրբեջանին , բայց Զանգեզուրում հայերը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ այդ պայմանագիրը և Հայաստանի հետագա բոլշևիզացումը չճանաչեցին՝ հռչակելով Լեռնային Հայաստանի

Հանրապետություն (բացի Զանգեզուրից նրա կազմի մեջ մտավ նաև Լեռնային Ղարաբաղի հարավային մասը):): 1921թ .գարնանը դաշնակների զինված ջոկատները Կարմիր Բանակի կողմից դուրս մղվեցին: Մոսկվան անհրաժեշտ համարեց Զանգեզուրը թողնել Հայաստանին:

Հիմնվել է **1920** թվականի դեկտեմբերի **2**-ին Հայաստանի Հանրապետության և ՌԽՖՍՀ միջև ստորագրված համաձայնագրով (տե՛ս Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և ՌԽՖՍՀ միջև **1920** դեկտեմբերի **2)**:

Մինչ այդ, 1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՌՀԿ), անցնելով հայ-ադրբեջանական սահմանը, իր ղեկավարությամբ գործող գնդով մտել է Քարվանսարա (Իջևան) և Հայաստանը հռչակել խորհրդային հանրապետություն: 1920 թվականի վերջին և 1921 թվականի սկզբին նախկին հայկական բանակի շուրջ 1400 սպաների «վերադաստիարակելու» նպատակով հեռացրել են Հայաստանից և մեկուսացրել Բաքվի բանտերում ու Ռյազանի (Ռուսաստան) համակենտրոնացման ճամբարներում: 1921 թվականի հունվարին պաշտոնից հեռացվել է ՀՍԽՀ Կարմիր բանակի հրամանատար Դրոն: Նրան թույլատրվել է մեկնել Մոսկվա, իսկ հետագայում՝ արտասահման: 1922 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 1990 թվականի օգոստոսի 23-ը ՀԽՍՀ, 1940-ից ՀՍՍՌ, 1966-ից ՀՍՍՀ, գտնվել է ԽՍՀՄ կազմում:

ՀայաստանիՀանրապետություն(1991)

1991թ.հոկտեմբերի 16-ին Հայաստանի բնակչությունը ընտրեց իր առաջին առաջին նախագահին՝ Լևոն Տեր-Պետրոսյանին: Արցախյան պատերազմում Հայաստանի հաղթանակից հետո Ադրբեջանը և Թուրքիան փակեցին Հայաստանի հետ իրենց սահմանները՝ դրանով շրջափակման մեջ դնելով Հայաստանին: Այդ դեպքերը էապես ազդեցին նորանկախ պետության տնտեսության վրա : 1998թ. փետրվարին Լևոն Տեր-Պետրոսյանը ստիպված էր հրաժարական տալ:

Լոռու մարզ, Վանաձորի Ազատ Խլղաթյանի անվան հմ.,18 միջնակարգ դպրոց

Ուսուցիչ՝ Գայանե Ավետիքյան

Դասարան 10

Առարկա՝ Պատմություն

Դասի թեմա՝ Պատմական էքսկուրս

Դասի տիպը՝ Կրկնողական-ընդհանրացնող դաս

Դասի նպատակը՝

Նպաստել հայ ժողովրդի պատմության մասին գիտելիքների ձեռք բերմանը և զարգացմանը

Ուսուցողական

Կարողանա բացատրել հայոց պատմության բոլոր ժամանակաշրջանների պատմական

անց ու դարձերը, հաջողությունները և անհաջողությունները, վերլուծել և մեկնաբանել հայ պատմական գործիչների գործունեությունը

Դաստիարակչական

- Տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, փաստերը, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրել, բնութագրել համեմատելու, եզրահանգումներ անելու, տեսակետ հայտնելու, գնահատելու, արժևորելու կարողությունների ձևավորմանը

Զարգացնողական

Գնահատել տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած քաղաքական իրավիճակ-

ները և քաղաքական գործիչների գործունեությունը, նոր համակարգերի ձևավորման

պատմական դերն ու նշանակությունը

Դասի խնդիրները՝

- Ձևավորել հետաքրքրություն պատմական կարևոր իրադարձությունների հանդեպ
- Նպաստել բանավոր խոսքի,համագործակցային աշխատանքի զարգացման

Վերջնարդյունքը՝

Ներկայացնի հայ ժողովրդի պատմությունը, պետության զարգացման հիմքերը, պետական գործիչների գործունեության հիմնական ձևերը, դրանց կարևորությունը, հաջողություններն ու բաց թողումները, ներկայացնի սեփական վերլուծությունը, մեկնաբանությունը

Դասի մեթոդները՝ դասախոսություն, խմբային աշխատանք

Կոմպետենցիաները՝

1.Մշակութային- սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ

2.Լեզվական-գալ նրան,որ աշակերտները կարողանան գրագետ ձևով շարադրեն բանվոր խոսքը,կիրառեն լեզուն՝որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք

3.Սովորել սովորելու-խմբում աշխատելով՝ սովորում են միմյանց սովորեցնել,ելքեր որոնել՝ նպատակին հասնելու համար

4.Ինքնաճանաչողական և սոցիալական-խմբում աշխատելով սովորում են համագործակցել, հարգել ընկերներին, հետևել խմբի կանոններին, քաջալերել և օգնել ընկերներին

5.Թվային մեդիա և գրագիտություն-ձևավորել ժամանակակից տեխնոլոգիաների և զարգացման միտումների վերաբերյալ գիտելիք և դրա կիրառման հմտություններ

Անհրաժեշտ պարագաները՝ համակարգիչ, սահիկաշար, պրոյեկտոր, այլ պարագաներ

Դասի ընթացքը՝ կազմակերպչական մաս-

Դասարանը նախօրոք բաժանված կլինի 5խմբի (յուրաքանչյուր խմբում 5 աշակերտ), կկատարվի աշակերտների հաշվառում:

Դասի բուն մասը-Դասի խթանման փուլում՝

Դասի բուն մասը-Դասի խթանման փուլում՝

Ինչ՞ գիտենք հայ ժողովրդի պատմության մասին

Աշակերտներին լսելուց հետո հակիրճ դասախոսություն ներկայացնել և ավելացնել այն,

ինչ չեն ասի աշակերտները: Սահուն անցումներով ներկայացնել պատմական բոլոր

ժամանակաշրջանները: Յուրաքանչյուր խմբի նախորոք հանձնարարաել պատմական տարբեր ժամանակաշրջաններ, խմբերում քննարկելուց հետո ներկայացվում է խմբի աշախտանքը, որից հետո խմբերը քննարկում են պատմական հերոսներին, պետական գործիչներին, նշում են դրական և բացասական կողմերը:

Ամփոփում և գնահատում –Ուսուցիչը գնահատում է յուրաքանչյուր խմբի աշխատանքը,

որը համապատասխանում է տվյալ խմբի յուրաքանչյուր աշակերտի առավելագույն գնահատականին,իսկ աշակերտին գնահատում է խումբը՝հաշվի առնելով նրա ներդրումը

խմբին բերած միավորների գործում:

Խմբերի աշխատանքը գնահատելուց հետո խմբերին տալ հետևյալ հարցերը՝

1.Ի՞նչ սովորեցինք այսօր:

2. Կցանկանայի՞նք արդյոք նմանատիպ դասեր շատ անցկացնել:

4.Ի՞նչ առաջարկներ ունեք:

5.Կցանկանայիք էքսկուրսիաներ կազմակերպել հայ ժողովրդի պատմության բոլոր

ժամանակաշրջաններին վերաբերող պատմական վայրերում:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 2002:

2.«Հայ Ժողովրդի Պատմություն», Հ. 1., Խմբ.՝ Աղայան Է. Բ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ.: ՀՍՍՀԳԱ Պատմությանին-տ. Երևան: ՀՍՍՀԳԱ հրատ., 1971:

3. Մովսես Խորենացի «Հայոցպ ատմություն»:

4.https://hy.wikipedia.org/wiki/

5. Ծ. Պ. Աղայան. «Հայ ժողովրդի պատմության նկարագարդ ակնարկներ» էջ 15-21

6. Ադոնց Ն. «Հայաստանի պատմությունը», Երևան 1972

7. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, է ջ 691